**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-10/2-9 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **18 -ը մարտի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Տեպլոտեխնիկա» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Ս. Մելիքովի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **27.12.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-10/2-9** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***8,388,000 (ութ միլիոն երեք հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, ***բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«Տեպլոտեխնիկա» ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Ադանայի փող., տուն 36 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձապետական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ1570025499450100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02268366 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| **Ն. ՅՈԼՉՅԱՆ** | **Ս. ՄԵԼԻՔՈՎ** |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/2-9 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Հ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդեռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.09.2020թ. |
| 80. | Օդորակիչ 24000 BTU CENTEK ֆիրմա | հատ | 30 | 225,000 | 6,750,000 | 15 | 15 |
| 81. | Օդորակիչ 7000 BTU CENTEK ֆիրմա | հատ | 20 | 81,900 | 1,638,000 | 10 | 10 |
| **Ընդամենը** | | | | | **8,388,000** | | |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/2-9 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 80. | Օդորակիչ 24000 BTU CENTEK ֆիրմա | 39714200/503 | 6,750,000 | 3,375,000 | 3,375,000 | 3,375,000 | 6,750,000 | 6,750,000 | 6,750,000 | 6,750,000 | 6,750,000 | 6,750,000 |
| 81. | Օդորակիչ 7000 BTU CENTEK ֆիրմա | 39714200/504 | 1,638,000 | 819,000 | 819,000 | 819,000 | 1,638,000 | 1,638,000 | 1,638,000 | 1,638,000 | 1,638,000 | 1,638,000 |
| **Ընդամենը** | | | **8,388,000** | **4,194,000** | **4,194,000** | **4,194,000** | **8,388,000** | **8,388,000** | **8,388,000** | **8,388,000** | **8,388,000** | **8,388,000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

**Ն. ՅՈԼՉՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Տեպլոտեխնիկա» ՍՊԸ**
տնօրեն

**Ս. ՄԵԼԻՔՈՎ**